ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴՎԻՆԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ս. Խ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Դվինի պալատը իրավամբ համարվում է վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից մեկը։ Այն հայտնի դարձավ 1937—1939 թթ. պեղումների ժամանակ, երբ վերջնականապես լույս աշխարհ հանվեց ղգալի չափեր ունեցող (31,18×31,93 մ) այս կառուցվածքը։ Դժբախտաբար մեզ են հասել պատերի առաջին շարքերը միայն, իսկ առանձին հատվածներում մնացել են սոսկ հիմնապատերը։ Ըստ իր հատակագծային հորինվածքի այն քառակուսի եզրաձև ունեցող եռանավ կառուցվածք է, որտեղ կենտրոնական սյունազարդ դահլիճը (11,56×26,90 մ) երկու կողմից երիզվում է համեմատաբար փոքր չափեր ունեցող սենյակներով։ Իրենց նախնական տեղում են հինգ բավական մեծ խարիսխները։ Համարյա թե ամբողջությամբ մեզ են հասել մի հիանալի ոլորազարդ խոյակ և նման խոյակների մի քանի բեկորներ։ Ուշագրավ է, որ ճիշտ նույնատիպ հորինվածք է ունեցել Արուճի պալատը, թեև բացարձակ չափերի տեսակետից այն համեմատաբար ավելի փոքր կառուցվածք է։ Նման լուծում է ունեցել նաև Զվարթնոցի պալատը, որտեղ ևս հանդիպում են համանման խարիսխներ և խոյակների բեկորներ։ Սակայն եթե վերջին երկու հուշարձաններն էլ ունեն ճիշտ թվագրում (Զվարթնոցի պալատը կառուցվել է VII դարի 40—50-ական թթ., Արուճի պալատը նույն VII դարի 60—70-ական թթ.), ապա նույնը չենք կարող ասել Դվինի պալատի մասին։ Չի պահպանվել նրա կառուցման մասին ոչ մի կոնկրետ հիշատակություն և մեզ չի հասել նրա կառուցման ժամանակը ճշտող որևէ վիմագիր արձանագրություն։ Այս պայմաններում հասկանալի են այն տարաձայնությունները, որ կան հետազոտողների մոտ։ Այսպես, Կ. Ղաֆադարյանի կարծիքով պալատը ամենայն հավանականությամբ կառուցվել է 461 թ. անմիջապես հետո կամ 485—489 թթ. միջև[1]։ Վ. Հարությունյանի կարծիքով այն կարող է կառուցված լինել ինչպես V, այնպես էլ VI դարում, 471—572 թթ. միջև[2]։ Ն. Տոկարսկու կարծիքով պալատը կառուցել է Սմբատ Բագրատունին, երբ VII դարի սկզբում ձեռնարկեց Դվինի մեծ տաճարի վերակառուցման գործը[3]։

Յուրաքանչյուր ճարտարապետական հորինվածքի թվագրության որոշման համար առաջնակարգ նշանակություն ունի երկու հիմնական գործոն՝ առաջինը մատենագրական վկայություններն են, իսկ երկրորդը՝ բուն հո-

---

1 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 119։

2 Վ. Հարությունյան, Դվինի V—VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, էջ 57։

3 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 66։

շարձանի ճարտարապետական ձևերը, ընդ որում երկու գործոնների համընկնումն է, որ ի վերջո պայմանավորում է թվագրության ճշտությունը։ Հարցն ավելի է բարդանում, եթե չեն պահպանվել բոլոր տվյալները, երբ չկան ո՛չ վիմագրական արձանագրություններ և ո՛չ էլ պատմիչների, հատկապես կառուցմանը ժամանակակից պատմիչների ուղղակի հիշատակությունները։ Իսկ եթե բուն կառուցվածքից էլ առանձին հատվածներ են մնացել միայն, չպետք է զարմանալ, որ հետազոտողների մոտ հանդիպում ենք հաճախ տրամագծորեն հակառակ, իրարամերժ կարծիքների։

Այժմ նման իրադրություն է ստեղծվել Դվինի ամենանշանավոր կառուցվածքներից մեկի՝ կաթողիկոսական պալատի թվագրության հարցում, երբ հուշարձանը թվագրվում է V, VI և VII դարերով, մի բան, որը չի կարող համակերպվել հայկական ճարտարապետության ուսումնասիրության այժմյան մակարդակի հետ։ Այս նախադրյալներից ելնելով էլ անհրաժեշտ է դառնում հանգամանորեն քննել թե՛ հուշարձանի մասին մեզ հասած պատմական տեղեկությունները, թե՛ ճարտարապետական այն բոլոր տվյալները, որոնք ընձեռում է ինքը՝ հուշարձանը։

Սկսենք մատենագրական տեղեկություններից։

Մեզ հետաքրքրող հուշարձանի մասին եղած տվյալները, դժբախտաբար, խիստ սուղ են, կցկտուր և հաճախ ուսումնասիրողները ստիպված են դիմելու կողմնակի տեղեկությունների այս կամ այն հարցը ճշտելու համար։

Հնագույն տեղեկությունը, որը որոշակիորեն առնչվում է Դվինի կաթողիկոսական պալատի հետ, դա 461 թ. Գյուտ կաթողիկոսի Վաղարշապատից Դվին տեղափոխվելն է, հանգամանք, որը հնարավորություն է տալիս ենթադրել կաթողիկոսական պալատի գոյությունը Դվինում արդեն V դարի երկրորդ կեսում։ Սակայն թե որտեղ է եղել այդ շենքը, ինչ ձևեր է ունեցել, այս մասին չունենք և ոչ մի հիշատակություն։ Մի բան կարելի է որոշակի ասել, որ այն չէր կարող շատ հեռու լինել Դվինի կաթողիկոսանիստ Ս. Գրիգոր տաճարից։ Ղազար Փարպեցին, նկարագրելով Վահան Մամիկոնյանի մարտական նշանակվելու կապակցությամբ կազմակերպված տոնախմբությունները, գրում է, որ այնքան շատ ժողովուրդ էր հավաքվել, որ տաճարում և արտաքին սյունասրահներում տեղ չլինելու պատճառով նրանք լցրել էին տաճարի շուրջը եղած հրապարակները. «Եւ ոչ բաւեալ ընդունել զամենեսեան տանն Աստուծոյ՝ լնուին արտաքոյ սրահք եկեղեցւոյն և փողոցք և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»[4]։ Հաջորդ վկայությունը առնչվում է արդեն 572 թ. ապստամբության հետ, երբ թշնամին այրում է Ս. Գրիգոր տաճարը[5]։ Այսպես այրված և կործանված նա մնաց շուրջ չորս տասնամյակ, մինչև VII դարի սկզբին Սմբատ Բագրատունին ձեռնարկեց նրա վերաշինման գործը և հնավանդ բազիլիկայի հիմքերի վրա բարձրացրեց ըստ էության մի նոր տաճար։ Այս ամբողջ շրջանից կաթողիկոսական պալատի մասին չկա և ոչ մի հիշատակություն։ Հայ պատմիչներն առհասարակ զուսպ են հուշարձանների մասին հիշատակելիս, և անհամեմատ ավելի զուսպ են նրանք, երբ հարցը վերաբերում է աշխարհիկ կառուցվածքներին։ Այս տեսա-

4 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան», Տփղիս, 1904, էջ 178։

5 «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն», Երևան, 1939, էջ 27։

կետից բացառություն չի կազմում նաև Սեբեոսը, որը թեև չի նշում, թե երբ է կառուցվել կաթողիկոսի պալատը, սակայն հիշատակում է, որ հենց այդ պալատում է 652 թ. իշևանել բյուզանդական Կոստանդ կայսրը[6]։

Տաճարը հիմնահատակ կործանվեց 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ։ Պալատը պահպանեց իր գոյությունը ևս մի քանի դար, և հետագայում, ինչպես ցույց են տալիս պեղումները, այն վերածվեց մզկիթի։ Քանդվել է հավանաբար XIII դարում։

Սման իրադրության պայմաններում պատահական չէ բնավ, որ հետազոտողները նպատակ ունենալով զեթ մոտավոր չափով պարզաբանելու վաղ միջնադարյան այս նշանավոր հուշարձանի կառուցման հանգամանքները, որոնում են կողմնակի տվյալներ, թեկուզ և ավելի ուշ շրջանի պատմիչների մոտ։ Այսպես, Վ. Հարությունյանը, անդրադառնալով X դարի պատմիչ Ուխտանեսին, գրում է հետևյալը. «Ուխտանես եպիսկոպոսը պատմում է, որ 572 թ. սբ. Գրիգորի տաճարը խորտակվելու և հրդեհվելու ժամանակ եկեղեցական անոթների մի մասը փոխադրվել է պատրիարքական ապարանք, և որ նոր շենք կառուցելուց հետո այդ անոթները նորից բերվել են տաճարի շենքը։ Այս վկայությունն անվիճելիորեն ցույց է տալիս, որ պատրիարքական ապարանքը կառուցված է եղել համենայն դեպս 572 թ. առաջ» և հետո. «Մենք հազիվ թե սխալված լինենք, եթե պատրիարքական ապարանքի կառուցման թվականը հասցնենք V դարի վերջերը, կամ VI դար, այսինքն 470—471 թթ. և 572 թ. միջև ընկած ժամանակաշրջանը»[7]։

Մեր կարծիքով Ուխտանեսի տեքստի[8] նման մեկնաբանության հետ դժվար է համաձայնել։ Ամենից առաջ նշենք, որ Ուխտանեսը բավական մանրամասն նկարագրելով, թե ինչպես կաթողիկոսի տեղապահ Վրթանես Քերթողը համաձայն ցուցակի նորընտիր կաթողիկոս Աբրահամին է հանձնում եկեղեցական իրերը, ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե որտեղ են պահված եղել այդ իրերը և ինչ առնչություն ունեն դրանք շուրջ չորս տասնամյակ առաջ՝ 572 թ. այրված տաճարի հետ։ Անշուշտ կարելի է ենթադրել, որ այդ եկեղեցական իրերը մինչև նորընտիր կաթողիկոսին հանձնելը պահվում են եղել կաթողիկոսարանի թաքստոցներում ինչ-որ տեղ (ինչպես այդ ենթադրում է Մ. Օրմանյանը)[9]։ Սակայն ոչ մի հիմք չկա այդ ամենը կապել Ուխտանեսի տեքստի հետ և եզրակացնել, որ մեզ հետաքրքրող պալատն արդեն գոյություն ուներ 572 թ. և այնտեղ էլ, տաճարի կործանումից հետո, իբր, տեղափոխել են եկեղեցական իրերը։

Կաթողիկոսական պալատի թվագրության հարցին հանգամանորեն անդրադարձել է Կ. Ղաֆադարյանը։

Նա գրում է. «Կաթողիկոսի պալատը Դվինում շինվել է 461 թվականից անմիջապես հետո, երբ այնտեղ փոխադրվեց հայրապետական աթոռը։ Սակայն, եթե ենթադրելու լինենք, որ հայրապետական աթոռը Դվին փոխադրվելուց անմիջապես հետո չի շինվել կաթողիկոսարանը, այլ ավելի ուշ. այդ դեպքում պետք է ընդունենք, որ նա կառուցվել է 461 թվականից հետո և

6 Նույն տեղում, էջ 144։

7 Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 57։

8 Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, հատ. Ա, Բ, Վաղարշապատ, 1871, էջ 66—67։

9 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, Բեյրութ, 1963, էջ 619—620։

553 թվականից առաջ, երբ արդեն պալատն իբրև օրիենտիր շինություն հիշատակված է Յիզտբուզիտի վկայարանը կառուցելու կապակցությամբ» և հետո. «Եթե ընդունենք, որ կաթողիկոսի պալատը 460-ական թվականներին չի կառուցվել, այդ դեպքում պետք է ենթադրենք, որ նրա հիմքը դրել են և կառուցումն ավարտվել է Յովհան Մանդակունու կաթողիկոսության (478—490) վերջին տարիներին, երբ արդեն Վահան Մամիկոնյանը մարզպան էր»[10]։

Դժվար չէ տեսնել, որ այս ամենը չի անցնում ենթադրությունների շրջանակներից, և միակ իրական կռվանը Գյուտ կաթողիկոսի Դվին տեղափոխվելն է, որը և կարող է համարվել Դվինում կաթողիկոսական պալատի կառուցման ամենավաղ սահմանը։

Կ. Ղաֆադարյանը նշում է պալատի գոյության ևս մեկ, միջանկյալ եզրագիծ՝ 553 թ., երբ, նրա կարծիքով, մեզ հետաքրքրող շինքը արդեն գոյություն ուներ։

Արդ, տեսնենք այժմ ինչ մատենագրական կռվանների վրա է հենվում հեղինակը, որոնք նրա կարծիքով հաստատում են պալատի գոյությունը առնվազն VI դարի կեսին։ Կ. Ղաֆադարյանի համար այդպիսի ելակետ է հանդիսանում X դարի պատմիչ Դրասխանակերտցու հիշատակությունը Յիզտբուզիտ նահատակի մասին։ Դրասխանակերտցին գրում է, որ Յիզտբուզիտ պարսիկը քրիստոնեություն ընդունելուց հետո «...բաղում չարչարանս կրեալ ի մարզպանէ Վշնասն Վահրամայ ի Դվին քաղաքի պսակի մարտիրոսական մահուամբ ի Քրիստոսէ։ Զոր բարձրեալ զսուրբ մարմինն սրբոյ մարտիրոսին՝ մեծի հայրապետին Ներսեսի բովանդակ եպիսկոպոսօք և կղերիւք եկեղեցւոյ՝ եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի յարևելից կողմանէ, շինեալ ի վերայ վկայարան սուրբ կոփածոյ քարամբք»[11]։ «Բազում չարչարանքներ կրելով մարզպան Վշնասն Վահրամից, նա մահացավ մարտիրոսական մահով, հանուն Քրիստոսի։ Մեծ հայրապետ Ներսեսն ու եկեղեցու բովանդակ եպիսկոպոսներն ու կղերը վերցրին սուրբ մարմինը սուրբ մարտիրոսի և դրեցին կաթողիկոսական սուրբ եկեղեցու արևելյան կողմում և վրան կոփածո քարերից սուրբ վկայարան կառուցեցին»։

Այստեղ պարզ ու հստակ կերպով ասված է, որ Յիզտբուզիտի նահատակումից հետո նրա մարմինը մեծ հանդիսավորությամբ դնում են «մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի»— այսինքն կաթողիկոսական սուրբ եկեղեցու մոտ, «յարևելից կողմանէ», այսինքն նրա արևելյան կողմում և վրան կոփածո քարերից վկայարան կառուցում[12]։

Կ. Ղաֆադարյանը պատմիչի այս հատվածից հանգում է միանգամայն այլ եզրակացության։ Նրա կարծիքով այստեղ խոսքը կաթողիկոսական պալատի մասին է, և նրա արևելյան կողմում էլ կառուցվել է Յիզտբուզիտի վկայարանը. վերջինս նա նույնացնում է այստեղ լսված միանավ եկեղեցու հետ։ Եվ որովհետև նահատակությունը կատարվել է 553—554 թթ.,

10 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 119։

11 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոցս», Թիֆլիս, 1912, էջ 64։

12 Կ. Ղաֆադարյանի աշխատության մեջ (էջ 106) Դրասխանակերտցու «Եդին մերձ ի սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի» նախադասության «ի» շաղկապը սխալմամբ «ու» է տպվել, մի բան, որը որոշ չափով փոխում է իմաստը։

Կ. Ղաֆադարյանը եզրակացնում է, որ պալատը արդեն գոյություն ուներ առնվազն VI դարի կեսերին[13]։

Որ Դրասխանակերտցին այստեղ խոսում է կաթողիկոսական տաճարի և ոչ թե կաթողիկոսի պալատի մասին պարզ է դառնում նաև ոչ միայն պատմիչի վերոհիշյալ վկայությունից, այլև մի շարք այլ հիշատակություններից, որտեղ նույն այդ աշխարհիկ շենքը բնութագրելու համար որպես կանոն նա օգտագործում է «տուն կաթողիկոսարանի» կամ «տուն բնակութեան» արտահայտությունները։

Այսպես, խոսելով բյուզանդական Կոստանդ կայսեր Դվին գալու և պալատում իջևանելու մասին, նա գրում է, որ Կոստանդը «ի քաղաքն Դվին իջաւանս ի տան կաթողիկոսարանին արարեալ»[14] (այստեղ և հետագայում ընդգծումները մերն են— Ս. Մ.)։

Անդրադառնալով իշխան Գրիգոր Մամիկոնյանի գործունեությանը, Դրասխանակերտցին հիշատակում է, որ նա եկեղեցի է կառուցում Արուճում և նրա մոտ «հաստահեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգե տուն բնակուրեան իւրոյ»[15]։

Խոսելով Դավիթ Արամոնցի կաթողիկոսի մասին, հիշատակում է, որ Արամոնք գյուղը հնուց կաթողիկոսական սեփականություն էր, և այստեղ էլ Դավիթ կաթողիկոսը իր իսկ կառուցած եկեղեցու մոտ հիմնադրում է մի նոր «տուն բնակուրեան»[16]։ Նկարագրելով Եսայի կաթողիկոսի մանկությունը, նա գրում է, որ ապագա կաթողիկոսի աղքատ մայրը, մուրալով «եկն յարեցաւ նա ի տուն կաթողիկոսարանին»[17]։ Հիշատակելով Խուդիմա ոստիկանի այցը Դվին գրում է, որ նա «...տեսեալ զգեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթողիկոսարանին»[18]։

Ուշագրավ է, որ կաթողիկոսի նստավայրը, պալատը նշելու համար նույն արտահայտություններն են օգտագործում ինչպես ավելի վաղ շրջանի, այնպես էլ ուշ դարերի պատմիչները։

Այսպես, Սեբեոսը, խոսելով Կոստանդ կայսեր Դվին գալու մասին, գրում է, որ նա «երթեալ ի Դուին՝ նստաւ ի տան կաթողիկոսին»[19]։ Անդրադառնալով մեկ անգամ ևս նույն հարցին, Սեբեոսը դարձյալ գրում է, որ «Եկն արքայ Կոստանդին և նստաւ ի տան կաթողիկոսին»[20]։

Ստեփանոս Օրբելյանը խոսելով VIII դարի գործիչ Ստեփանոս Սյունեցու մասին գրում է հետևյալը. «Էր սա որդի աւագ երիցու մեծ մայրաքա-

---

13 Նշենք այստեղ, որ Դրասխանակերտցու վերը բերված հատվածը մեզանից շատ առաջ ճիշտ են մեկնաբանել մի շարք հետազոտողներ։ Այսպես. Ա. Շահնազարյանը գրում է, որ Յիզտբուզիտի «մարմինը հողին հանձնեցին Դվինի կաթողիկոսական տաճարի մոտ, նրա արևելյան կողմում, և վրան վկայարան կառուցեցին» (А. Шахназарян. Двин, Ереван, 1940, էջ 39)։

14 Դրասխանակերտցի, էջ 86.

15 Նույն տեղում, էջ 91։

16 Նույն տեղում, էջ 105։

17 Նույն տեղում, էջ 107։

18 Նույն տեղում, էջ 111։

19 Սեբեոս, էջ 143։

20 Նույն տեղում, էջ 144։

զաքին Հայոց Դվնոյ և սնանէր ու զարդանայր ուսմամբ ի տան կաթողիկոսարանին Հայոց»[21]։

Կարծում ենք բավական է։ Պարզ է դառնում, որ կաթողիկոսանիստ պալատի բնութագրման համար ամենաառաջնակարգ նախապայմանն է տուն բառի առկայությունը, մինչդեռ Դրասխանակերտցու վերը բերված հիշատակության մեջ ոչ միայն չկա այդ «տուն» բառը, այլև որոշակի կերպով շեշտված է «սուրբ եկեղեցին կաթողիկոսարանի» արտահայտությունը, մի բան, որը կասկած չի թողնում, որ խոսքը այստեղ ոչ թե կաթողիկոսի պալատի մասին է, այլ կաթողիկոսական տաճարի։ Ուշագրավ է, որ նույն այդ «եկեղեցին կաթողիկոսարանի» արտահայտությունը հանդիպում է նրա մոտ մեկ այլ տեղ ևս, որտեղ խոսքը անվերապահորեն վերաբերում է հենց նույն Դվինի տաճարին։ Այսպես, խոսելով 893 թ. Դվինի մեծ երկրաշարժի մասին, նա գրում է. «Վասն զի առհասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս զլիաւորացն... և զաստուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս՝ դղրդեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէր»[22]։

Որ այդ ահեղ երկրաշարժի ժամանակ իսկապես քանդվել է հենց մեծ եկեղեցին, և ոչ կաթողիկոսական պալատը, լիովին հատատեցին պեղումները։ Պալատը կանգուն է մնացել ևս մի քանի դար և հետագայում, ինչպես կարելի է ենթադրել, վերածվել է մզկիթի[23]։

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Դրասխանակերտցին այստեղ խոսում է ոչ թե պալատի, այլ կաթողիկոսական եկեղեցու մասին, որից արևելք էլ, ինչպես նշում է նա, կառուցեցին Յիղտրուզիտի դամբարանը։ Իսկ սա նշանակում է, որ մենք ոչ մի հիմք չունենք այդ դամբարանի հետ նույնացնելու կաթողիկոսական պալատից արևելք տեղավորված միանավ եկեղեցին, մի կառուցվածք, որն իր բոլոր ձևերով սերտորեն առնչվում է V դարի համանման կառույցների հետ և նրա թվագրությունը պարզապես չի կարելի ետ բերել և հասցնել մինչև VI դարի կեսերը։

Ինչ վերաբերում է կաթողիկոսական տաճարից արևելք կառուցված Յիղտրուզիտի դամբարանին, ապա այդ մասին անհրաժեշտ է ասել հետևյալը. այն հանգամանքը, որ բազիլիկայի արևելյան, դուրս եկող բազմանիստ աբսիդից մինչև պարսպի մեջ բացված լայն մուտքը հազիվ քսան մետր տարածություն էր մնում, ինքնին հասկանալի է դարձնում, որ այստեղ չէր կարող քիչ թե շատ նշանակալից չափեր ունեցող կառուցվածք լինել։ Դժբախտաբար տաճարից արևելք ընկած տարածությունը դեռևս լիովին պեղված չէ և թերևս մի օր այստեղ բացվի նման մի դամբարան։ Սակայն մյուս կողմից չպետք է մոռանալ, որ մահմեդական գերիշխանության պայմաններում, երբ որոշ ժամանակ անց կաթողիկոսական պալատն անգամ մզկիթի էր վերածվել, երկրի նոր տերերը չէին կարող հանդուրժել մի ինչ-որ դավանափոխի վկայարանի գոյությունը, որին մոլեռանդ մոգերը շուրջ մեկ դար առաջ մահապատժի էին ենթարկել քրիստոնեություն ընդունելու համար։ Ոչ մի կաս-

21 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 132։

22 Դրասխանակերտցի, էջ 162։

23 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 120։

կած չի կարող լինել, որ Յիզտբուզիտի դամբարանը պետք է ավերվեր թերևս VII դ. կեսերին, ընդ որում կքանդվեր ոչ միայն վերերկրյա կառուցվածքը, այլև բուն դամբարանը։

Այսպիսով, դժվար չէ տեսնել, որ մատենագրական տեղեկությունների մինչև այժմ արված վերլուծությունները չեն տվել քիչ թե շատ որոշակի արդյունքներ կաթողիկոսական պալատի թվագրության և նրա կառուցման հետ կապված հանգամանքների որոշման բնագավառում։ Մեր կարծիքով, հարցի պարզաբանմանը կարող է նպաստել Սեբեոսի մի հիշատակությունը, որը թեև անմիջականորեն վերաբերում է մեծ բազիլիկային, սակայն խիստ էական նշանակություն է ստանում նաև պալատի հարցում։

Սեբեոսի այս խիստ հետաքրքիր (և մենք կասեինք՝ ճարտարապետության պատմության բնագավառում համարյա թե անուշադրության մատնված) հիշատակության մեջ խոսվում է 572 թ. ապստամբության ժամանակ Դվինի Ս. Գրիգոր տաճարի այրման մասին։ Թեև խոսքը վերաբերում է կաթողիկոսանիստ տաճարին, սակայն այն հանգամանքը, որ սերտ առնչություններ գոյություն ունեին կաթողիկեի և կաթողիկոսական պալատի միջև, և վերջինիս պատմական բախտը միշտ էլ անքակտելիորեն կապված էր տաճարի ճակատագրի հետ, որոշակի հիմքեր է տալիս ավելի հանգամանորեն կանգ առնել այս հարցի վրա։

Սեբեոսը գրում է. «Եկեղեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս պարսիկքն, հարին հուր և այրեցին»[24]։

Նույն այս դեպքը նշված է նաև կաթողիկոսի տեղապահ Վրթանես Քերթողի և բյուզանդական Հայաստանի կառավարիչ Սորմենի նամակագրության մեջ, որտեղ վերջինս հիշատակում է Դվինում կրակով ոչնչացված և կործանված տաճարում նստած մի հոգևորականի մասին[25]։

Տաճարի այրման փաստին անդրադարձել են նաև մի շարք հետազոտողներ[26]։

Բնականաբար հարց է առաջանում՝ ի՞նչն էր ստիպել թշնամուն բռնագրավել եկեղեցին, փակել այդ նշանավոր պաշտամունքային կենտրոնը և վերածել այն համբարանոցի, ամենայն հավանականությամբ այնտեղ կուտակելով զորակոյանի հեծելազորին անհրաժեշտ դարմանի և խոտի պաշարները։ Այս բանը չէր կարող չգրգռել հայերին, և պարսիկները այդ չէին անի, եթե չստիպեր անհրաժեշտությունը։ Նրանց այդ վարմունքը հասկանալու համար անհրաժեշտ է ի նկատի առնել ոչ միայն ընդհանուր պատմաքաղաքական իրադրությունը 572 թ. նախորդող շրջանում, այլև բուն տաճարի տեղաբաշխման հարցը, որը թերևս այստեղ վճռական նշանակություն է ունեցել։

Լավ հայտնի է, որ VI դարի կեսերից սկսած խիստ ուժեղանում է Սասանյան պետությունը, որն ամեն ինչ անում է վերջ տալու հայերի ինքնա-

---

24 Սեբեոս, էջ 27։

25 Տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 30, 43։

26 Այսպես, Մ. Օրմանյանը նշում է, որ «Դվնոյ Ս. Գրիգոր եկեղեցին այրված էր 571-ին Վարդան Մամիկոնյանի շարժման ատեն» («Ազգապատում», Ա, էջ 631)։ Լեոն գրում է, որ Սմբատ Բագրատունին «... սկսեց նորից շինել Դվինի Ս. Գրիգոր եկեղեցին, որ կործանված էր Վարդան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ» (Լեո. Երկեր. հատ. Բ, Երևան, 1967, էջ 231)։

վարական ձգտումներին, և Հայաստանը Պարսկաստանի մեջ միաձուլելու նը-պատակով սկսում են Դվինում ատրուշան կառուցել։ Ի պատասխան դրան ուժեղանում է ժողովրդի զժգոհության ալիքը և որոշակի բայլեր են արվում Բյուզանդիայից օգնություն ստանալու ուղղությամբ։ Մինչդեռ Դվինը Պարս-կաստանի հզորագույն ամրոցներից էր, ուղղված ոչ միայն Բյուզանդիայի, այլև բուն Հայ ժողովրդի դեմ, և պարսիկները ոչ մի դեպքում չէին կարող թույլ տալ նրա ամրությունների որևէ թուլացում։

Այս պայմաններում տարակույս չի կարող լինել, որ պարսիկ զորավար-ներին պետք է մեծապես մտահոգեին քաղաքի պարիսպներին խիստ մոտ գտնվող բազիլիկան և առհասարակ այն բոլոր շենքերը, որոնք կառուցված էին այստեղ և համարյա թե հպված էին պարսպին (միանավ եկեղեցին, Յիզտբուզիտի վկայարանը և, որ հնարավոր է, կաթողիկոսական պալատը)։ Այս տեսակետից առավել մեծ սպառնալիքը անշուշտ պետք է ներկայացներ հսկա բազիլիկան, որն իր ծավալով և բարձրությամբ համարյա թե ոչնչով չէր զիջում պարիսպներին։ Դժվար չէ կռահել, որ բավական էր, որ բազիլի-կան ընկներ թշնամիների ձեռքը, և նրանք հիանալի հենակետ կստանային պարիսպների դրոհի համար, և տաճարի (թերևս նաև պալատի) տանիքների վրա կենտրոնացած նետաձիգները կարող էին խիստ մեծ վնաս պատճառել պարսպի պաշտպաններին։

Այժմ ինքնին հասկանալի է դառնում, թե ինչն էր ստիպել պարսիկնե-րին նախօրոք բռնագրավել տաճարը (անշուշտ նաև շրջակայքի կառույց-ները), լցնել զարմանով ու խուռոով և առաջին իսկ վտանգի պահին հրդե-հել, միանգամից զրկելով հարձակվողներին նման հիանալի հենակետ ու-նենալու հնարավորությունից[27]։

Վերը նշեցինք, որ մեզ հայտնի չէ հնագույն կաթողիկոսական պալա-տի իսկական տեղը։ Ղազար Փարպեցու վկայության համաձայն V դարի վերջում բազիլիկայի շուրջը ագատ հրապարակներ էին տարածվում և այն-տեղ չկար տաճարին մոտ կառուցված և ոչ մի շենք։ Սակայն եթե մի պահ նույնիսկ ենթադրենք, որ մեզ հետաքրքրող պալատական կառուցվածքը (որը գտնվում է տաճարից 10—12 մետր հեռավորության վրա) նույն այդ Գյուտ կաթողիկոսի պալատն էր, կամ մի այլ պալատ, կառուցված Վահան Մամիկոնյանի ժամանակներում, ապա նույնիսկ այդ դեպքում տարակույս չի մնում, որ այն ևս պետք է բաժաներ բազիլիկայի տխուր ճակատագիրը, և թշնամին ոչ մի դեպքում չէր խնայի պարիսպներին այնքան մոտ տեղավոր-ված այս կառուցվածքը ևս։

Այսպիսով, կասկած չի կարող լինել, որ 572 թ. բռնկած հրդեհի բոցե-րի մեջ պետք է կործանվեին և՛ բազիլիկան, և՛ պալատը (եթե այն կար այս-տեղ), և՛ մյուս հարակից կառույցները։

Այսպես այրված և կործանված մնաց այս թագամատը շուրջ չորս տաս-նամյակ, և VII դարի սկզբին միայն Սմբատ Բագրատունին ձեռնարկեց

27 Ուշագրավ է, որ չորս տասնամյակ անց, 608 թ., երբ արմատապես փոխվել էր պատ-մական իրադրությունը և Պարսկաստանի հովանավորության ներքո Սմբատ Բագրատունին ձեռ-նարկեց տաճարի վերաշինման գործը, Դվինի պարսիկ բերդապահը նույն այդ ռազմական տե-սակետից երևելով, բոլորից տաճարի վերականգնման դեմ, թե այն օգարի մերձ է ու բերդն է վնասակար է ի թշնամուց։ Սակայն պարսից արքան հրամայեց «բերդն քակեսցի և եկեղեցին անգրեն ի նմին տեղւոջն շինեսցիս» (Սեբեոս, էջ 65)։

կործանված շենքերի վերականգնման գործը։ Չնայած նրան, որ Սերեոսը հիշատակում է այդ թագավորի առավել նշանակալից հուշարձանը միայն, հաստատապես կարելի է ասել, որ Սմբատ Բագրատունին պետք է վերականգներ պաշտամունքային համալիրի բոլոր կառույցները, և կաթողիկոսանիստ նոր, զմրեթավոր տաճարի կողքին անշուշտ պետք է բարձրանար նաև նրան համապատասխանող կաթողիկոսական պալատը։ Եվ անկախ նրանից, թե շենքն այդ կառուցվել էր հին պալատի հիմքերի վրա և կամ թե հողամասն ազատ էր ի սկզբանե (որն ավելի հավանական է թվում, երբ վերհիշում ենք Ղազար Փարպեցու վկայությունը), պեղումների շնորհիվ բացված մեզ հետաքրքրող պալատը իր հիմնական ճարտարապետական ձևերով պետք է լիներ VII դարի շինարարական գործունեության արդյունք, կառուցվեր հայկական ճարտարապետության մեջ ընդհանրացած նոր սճական ուղղության պահանջներին համապատասխան։

Մատենագրական տեղեկությունների վերլուծության հիման վրա արված այս եզրակացությունը ունի սկզբունքային նշանակություն, որովհետև ինչպես կտեսնենք, այդ դրույթների հետ լիովին համահնչյուն են հուշարձանի բոլոր ճարտարապետական ձևերը, այն բոլոր մանրամասները, որոնք պահպանվել են և լույս աշխարհ հանվել պեղումների շնորհիվ[28]։

Դառնանք այժմ բուն կառուցվածքին, նրա կառուցապատմանն ու ճարտարապետական ձևերին։

* * *

Ամենից առաջ անդրադառնանք մեզ հետաքրքրող կառուցվածքի ճարտարապետական շրջապատին։ Բանն այն է, որ կաթողիկոսական պալատը նրան շրջապատող կառույցների նկատմամբ ունի խիստ որոշակի շեղադիր դասավորություն, հանգամանք, որը ոչ միայն չէր կարող պատահական լինել, այլև ինչպես կտեսնենք հետագայում, խիստ որոշակի նշանակություն է ստանում ամբողջ համալիրի կառույցների շինարարության հերթականության որոշման հարցում։

Բացի բազիլիկայից, որը VII դարի սկզբին հիմնովին վերակառուցվել էր, այստեղ տակա են ևս երկու հուշարձան։ Առաջինը վերը հիշատակված միանավ եկեղեցին է, իսկ երկրորդը՝ տաճարից արևմուտք տեղավորված ինչոր աշխարհիկ շենք։

---

28 Այս խնդրի հետ սերտորեն առնչվում է Դվինում կաթողիկոսանիստ եկեղեցու տեղադրության հարցը։ Բանն այն է, որ տաճարի բռնագրավումից հետո (551—572 թթ. միջև) կաթողիկոսանիստ պիտի լիներ Դվինի մեկ այլ եկեղեցի, ընդ որում կասկած չի կարող լինել, որ բազիլիկայի դրամման հետ միասին պարսիկները պետք է գրավեին նաև կաթողիկոսական պալատը։ Այս իրադրությունն ինքնին որոշակի հիմքեր է տալիս Դվինի տերիտորիայում պաշտամունքային մեկ այլ կենտրոնի գոյության հնարավորությունը ենթադրելու համար, մի կենտրոն, որտեղ նստել էին հայ կաթողիկոսները շուրջ կես դար և այդտեղից վերադարձել իրենց ամանդական կենտրոնը, արդեն Կոմիտաս կաթողիկոսի ժամանակներում, երբ ավարտին էր հասել մեծ տաճարի կառուցման գործը։ Պատմիչները խիստ զուսպ են Դվինի պաշտամունքային կառույցների մասին խոսելիս, և հասկանալի է, որ նրանց կողմից հիշատակվող մի քանի վկայությունների անունները շատ հեռու են իրական պատկերը ներկայացնելուց։ Երկրի մայրաքաղաքում անշուշտ գոյություն են ունեցել այլևայլ, զգալի չափեր ունեցող եկեղեցիներ, և այս տեսակետից բնորոշ է Անիի օրինակը, որտեղ Ս. Գրիգոր անվանակոչման մի քանի եկեղեցի կար։ Բացառված չէ, որ նման պատկեր գոյություն ուներ նաև Դվինում։

Որոշակի հիմքեր կան ենթադրելու, որ ըստ ժամանակագրության տաճարի կառուցումից հետո այստեղ բարձրացված առաջին շենքը եղել է հենց միանավ եկեղեցին, մի կառուցվածք, որի արևելյան ճակատը դրված է մեծ բազիլիկայի արևելյան բազմանիստ ասբիդի ուղղությամբ։ Այն իր բոլոր ձևերով առնչվում է հայկական ճարտարապետության մեջ լավ հայտնի և V դարով թվագրվող հուշարձանների հետ։ Բացառված չպետք է համարել, որ եկեղեցին կառուցվել է Վահան Մամիկոնյանի կողմից, նրա մարզպան նշանակվելուց հետո։ Թերևս այս հուշարձանը ի նկատի ունի Սեբեոսը, երբ գրում է, որ Վահան Մամիկոնյանը եկեղեցիներ է կառուցում Վաղարշապատում, Դվինում և այլուր։

Կաթողիկե եկեղեցու շրջապատից հայտնի երկրորդ կառուցվածքը գտնըվում է նրա արևմտյան կողմում, տաճարից ընդամենը 12 մ հեռավորության վրա։ Հազիվ թե կարելի լինի կասկածել, որ սա առնչվել է պաշտամունքային այս մեծ կոմպլեքսի հետ, կազմել նրա օրդանական մասը և այնտեղ չէր կարող ինչ-որ պատահական աշխարհիկ կառուցվածք տեղավորվել։

Կ. Ղաֆադարյանը գրում է, որ «կաթողիկոսի պալատի և մայր եկեղեցու արևմտյան կողմում... բացվեցին սրբատաշ տուֆ քարով շինված մոնումենտալ շինության հիմնապատեր, որտեղ գտնվեց նաև տուֆ քարից մի սքանչելի խարիսխ։ Այդ խարիսխն իր շրջանաձև վերին մասից քառակուսու փոխարկվելու միջանկյալ տարածության անկյուններին ունի չորս ուռուցիկ եռանկյունաձև զարդեր։ Այդ խարիսխը, ինչպես նաև ամբողջ շինությունը պատկանում է VII դարին։ Այդ խարսխի երկու օրինակներն էլ, մի քանի տասնամյակ առաջ, Վերին Արտաշատ գյուղի բնակիչները հայտնաբերել են նույն տեղում և տարել են իրենց գյուղը։ Այստեղ հետաքրքիրն այն է, որ այդ սյունապարդ շենքը եկեղեցի չէ, այլ մի ինչ-որ աշխարհիկ շինություն, պալատ կամ պաշտոնատնեղ և հավանաբար կործանվել է 893 թվականի մեծ երկրաշարժի ժամանակ»[29]։

1964 թ. շարունակվեցին զգալի չափեր ունեցող այս աշխարհիկ շենքի պեղումները։ Բացի այդ, նրանից հյուսիս հայտնաբերվեցին այլևայլ հիմնապատեր, առանձին կառույցների մնացորդներ։ Ինչպես հիշատակում է Ա. Քալանթարյանը, այնտեղ բացվել է VIII դարի քառակուսի դահլիճ 7×7 մ չափերի, որտեղ հայտնաբերվեցին ծածկը կրող փայտյա սյունների խարիսխները[30]։

Իսոնանք այժմ համալիրի ընդհանուր կառուցապատման հարցերին։ Վերը նշվեց արդեն, որ գլխավոր տաճարը և միանավ եկեղեցին ունեն խիստ որոշակի արևմուտք-արևելք առանցքային կողմնորոշում, իսկ կաթողիկոսական պալատը այս բոլոր շենքերի նկատմամբ ունի ակնհայտ շեղադիր դասավորություն[31]։ Բնականաբար հարց է առաջանում. ի՞նչն էր խանգարել ճարտարապետին պալատը ևս տեղավորել միևնույն առանցքին համապատասխան և այսպիսով ստանալ ամբողջ կոմպլեքսի ավելի հավասարակշռված լուծում։ Բուն պալատի ճիշտ երկրաչափական կառուցումը իսպառ բացառում է

29 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 58։

30 Л. Калантарян. Раскопки центрального квартала гор. Двина (1964—1965 гг.), «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 215։

31 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 101, գծ. 73։

նրա ընդհանուր դասավորության ինչ-որ «սխալի» ենթադրությունը։ Ասել, որ պալատի տեղաբաշխումը պայմանավորված է եղել երկրի կողմերով, դարձյալ չի կարելի։ Համանման շեղումներ սովորական են պաշտամունքային կառուցվածքներում և ամեն անգամ թելադրված են եղել նրանով, թե տարվա



Դվին. տաճարի, պալատի և միանավ եկեղեցու հատակագծերը

որ ժամանակին է հիմնադրվել եկեղեցին և արևը ինչ դիրք է ունեցել երկրի կողմերի նկատմամբ։ Սակայն այստեղ գործ ունենք աշխարհիկ կառուցվածքի հետ և հասկանալի է, որ այդ պարագան ևս չի կարող որոշիչ լինել։

Պալատի շեղադիր դասավորությունը չի կարելի բացատրել նաև տեղանքի պահանջներով, այն հասկանալի կլինի լեռնային վայրերում կառուցվող շենքերում, սակայն ոչ այստեղ, համեմատաբար հարթ այս վայրում։

Սակայն փաստը մնում է փաստ, որ ինչ-որ գործոն ստիպել է ճարտարապետին ընտրելու պալատի հատակագիծ այս դիրքը։ Մեր կարծիքով այդպիսի գործոն է հանդիսացել արդեն գոյություն ունեցող շենքերի դասավորությունը։ Ճարտարապետը, եթե չէր ցանկանում զգալիորեն փոքրացնել ապագա պալատի չափերը, ստիպված էր մի կերպ հարմարեցնել նրան հատկացված հողամասին, տեղավորել իր կառուցվածքն այնպես, որ գեթ որոշ ազատ տարածություն մնար պալատի և արդեն գոյություն ունեցող շենքերի միջև։ Դժվար չէ տեսնել, որ պալատի տվյալ դասավորությունը միակ տրամաբանական տարբերակն է, և ճարտարապետը պարզապես ոչ մի այլ հնարավորություն չուներ։

Այսպես, եթե պալատի հարավ-արևմտյան անկյունը գտնվում է տաճարի հյուսիս-արևմտյան անկյունից 12 մետր հեռավորության վրա, ապա նույն պալատի հարավ-արևելյան անկյունը գտնվում է տաճարի հյուսիսային ճակատից արդեն 15 մետր հեռավորության վրա[32]։ Բնականաբար հարց է առաջանում. ի՞նչն էր խանգարել պալատի հարավային պատը տեղադրել տաճարի հյուսիսային պատին զուգահեռ, պահպանելով 12 մետր հեռավորությունը ամբողջ երկայնքով մեկ։ Դժվար չէ տեսնել, որ այստեղ խանգարիչ հանգամանքը միակն էր՝ հին բազիլիկայի հիմքերի վրա VII դարում կառուցված տաճարի կողային (հյուսիսային) աբսիդի առկայությունը, որը զգալիորեն (մոտ 3 մետր) դուրս է գալիս տաճարի հյուսիսային ճակատի նկատմամբ։ Ահա այս հանգամանքն է հենց, որ ստիպել է պալատի ճարտարապետին հնարավորին չափ շեղել պալատի հարավային պատը, որպեսզի քիչ թե շատ ազատ տարածություն մնա պալատի և տաճարի աբսիդի միջև։ Այստեղ տարածությունը կազմում է հազիվ 9,5 մետր, այն նվազագույնը, որը անհրաժեշտ էր մարդկանց նորմալ երթևեկության համար։ Այս հանգամանքը, ինչպես դժվար չէ նկատել, խիստ որոշակի նշանակություն է ստանում երկու կառուցվածքների շինարարության ժամանակագրության, նրանց կառուցման հերթականության որոշման հարցում։ Բանն այն է, որ եթե պալատի տեղաբաշխման ժամանակ ճարտարապետը ստիպված է եղել շեղել վերջինիս ուղղությունը, որպեսզի կառուցվածքի հարավային պատը ընդհուպ չմոտենա տաճարի հյուսիսային աբսիդին, կարող է նշանակել միայն ու միայն մի բան՝ այն, որ պալատը կառուցելու պահին տաճարն արդեն կար է կամ թե նրանք կառուցվել են միաժամանակ, և պալատը կառուցողները հենց սկզբից ի նկատի են ունեցել տաճարի հյուսիսային աբսիդի զգալի ելուստի առկայությունը։

Տաճարի աբսիդները, ինչպես հայտնի է, արդասիք են հին բազիլիկայի հիմքերի վրա միանգամայն նոր կոմպոզիցիա ունեցող գմբեթավոր տաճար տեղադրելու հանգամանքին, և աբսիդները տվյալ դեպքում կոնստրուկտիվ մեծ անհրաժեշտություն էին, կոչված չեզոքացնելու հսկա գմբեթի հորիզոնական ճիգերը։ Հասկանալի է, որ հին բազիլիկան բնավ կարիք չուներ նման աբսիդների, և նրա պատերը զուրկ էին նման ելուստներից, և եթե մեզ հետաքրքրող պալատական շենքը հիմնադրված լիներ մինչև VII դարը, մինչև բազիլիկայի կառուցումը, ապա ոչ մի անհրաժեշտություն չէր լինի պալատի նման շեղադիր դասավորության համար, և բազիլիկայի ու պալատի պատերը

32 Կ. Զաքարյան. նշվ. աշխ., գծ. N 73 (չափագրություն Գ. Քոչոյանի)։

կարող էին ճիշտ և ճիշտ զուգահեռ դասավորություն ունենալ, այնպես, ինչպես տեսնում ենք միանավ եկեղեցու տեղադրման հարցում։ Այսպիսով պարզ է դառնում, որ պալատի նման դասավորությունը թելադրված էր զմրեթավոր տաճարի կողային արսիդների առկայությամբ, և պալատի կառուցման ամենավաղ թվագրությունը, այսպիսով, պայմանավորված է հին բազիլիկայի վերակառուցման տարեթվով, և մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ նույն ճարտարապետը, որը վերակառուցում էր հին բազիլիկան, տեղադրել և կառուցել է տաճարից ոչ հեռու գտնվող պալատը։ Այդ մասին է վկայում նաև պալատի հարավային ճակատում բացվող մուտքի և տաճարի հյուսիսային ճակատի արևմտյան հատվածում տեղավորված մուտքի ճիշտ և ճիշտ հանդիպակաց դասավորությունը, մի բան, որն անշուշտ չէր կարող պատահական լինել և կոչված էր ապահովելու պալատի և տաճարի անմիջական հաղորդակցությունը։

Այս ամենի հետ միասին հարց է առաջանում. ի՞նչն էր խանգարում ճարտարապետին ոչ թե շեղել պալատն ընդհանրապես, այլ շարժել այն մի քանի մետր դեպի հյուսիս, պահպանելով պալատի և տաճարի պատերի զուգահեռ տեղաբաշխումը։ Սակայն չափագրական գծագրերից անմիջապես ակնհայտ է դառնում նման տեղաշարժման հնարավորության իսպառ բացառված լինելը։ Դժվար չէ տեսնել, որ այդ դեպքում համարյա թե կփակվեր այն ոչ լայն միջանցքանման տարածությունը, որը ստացվում էր պալատի և նրանից արևմուտք եղած ինչ-որ աշխարհիկ շենքի միջև, մի բան, որը բնավ չէր կարելի թույլատրել։ Ճարտարապետը չէր կարող շարժել պալատը նաև արևելյան ուղղությամբ։ Այստեղ էր միանավ եկեղեցին և նրա տեղաշարժման դեպքում նույնպես կփակվեր այն մի քանի մետր ազատ տարածությունը, որը ստացվում էր պալատի արևելյան ճակատի և միանավ եկեղեցու արևմտյան պատի միջև։

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ VII դարի սկզբին, երբ վերակառուցվում էր բազիլիկան և իր հին հիմքերի վրա բարձրանում զմբեթավոր, երկայնական ճակատներում դուրս եկող արսիդներ ունեցող տաճարը, նույն այդ ժամանակ էլ, բազիլիկայից հյուսիս, մինչ այդ ազատ տարածության վրա (հիշենք Ղազար Փարպեցու «հրապարակացն շուրջանակի» արտահայտությունը) հիմնադրվում է մի նոր պալատ։ Այն գալու էր փոխարինելու հնավանդ կաթողիկոսական պալատին, որը ինչ-ինչ պատճառներով նպատակահարմար չի եղել վերականգնել[33]։

33 Դարեր առաջ, ամենայն հավանականությամբ Հյուսե կաթողիկոսի ժամանակներում կառուցված այդ պալատի տեղն անդամ մնում է անհայտ։ Ելնելով վաղ միջնադարյան հայ ճարտարապետության մի շարք առանձնահատկություններից, կարելի է ենթադրել, որ պալատն ամենայն հավանականությամբ տեղավորված է եղել գլխավոր տաճարի հարավային կողմում։ Բանն այն է, որ հնագույն պաշտամունքային կառուցվածքների գերակշռող մեծամասնության մեջ մուտքերը, որպես կանոն, տեղավորվում էին արևմտյան և հարավային կողմերում, և հյուսիսային ցուրտ քամիներից խուսափելու համար այս կողմերում սահմանափակվում էր լուսամուտների քանակը։ Թեև կան առանձին շեղումներ (հատկապես ավելի ուշ շրջանում), սակայն երևույթն այս խիստ որոշակի է և ակնհայտ։ Պատահական չէ բնավ, որ այնպիսի հռչակավոր բազիլիկաներ, ինչպիսիք են Քասախը, Երերույքը, Աշտարակը, Աղցը հյուսիսային կողմում մուտքեր չեն ունեցել։ Այս պայմաններում միանգամայն տրամաբանական է, որ պալատական կառուցվածքները պետք է տեղաբաշխվեին տաճարների հարավային և գուցե մասամբ էլ արևմտյան կողմերում և պալատի ու եկեղեցու միջև ընկած ազատ տարածության վրա էլ պիտի

Այսպիսով, որոշակի հիմքեր կան ենթադրելու, որ մեզ հետաքրքրող կառուցվածքի հիմնադրման ամենավաղ սահմանն է VII դարի առաջին տարիները, երբ Սմբատ Բագրատունին վերակառուցում էր այս ամբողջ պաշտամունքային համալիրը։ Սակայն ճիշտ այնպես, ինչպես 572 թ., այնպես էլ արաբների գրոհի ժամանակ (640 թ.) քաղաքի հիմնական պարիսպներին



Դվին. պալատ, սյան խոյակներից

մոտ գտնվող այս կառուցվածքները չէին կարող չդառնալ համառ մարտերի առարկա, որովհետև գրավելով տաճարն ու նրա մոտ եղած պալատը, հարձակվողները հուսալի հենարան էին ստանում քաղաքի հիմնական պարիսպների վրա գրոհելու համար։ Թշնամին շրջապատում է պարիսպները հսկա խարույկներով և ինչպես Սեբեոսն է ասում՝ «...արկին մուխ շուրջանակի, մերժեցին ծխովն և նետաձգութեամբն զպահապանս պարսպին»[34]։ Այս պայմաններում ինքնին հասկանալի է, որ այրվող քաղաքի մեջ չէր կարող անվնաս մնալ վայտաածածկ, պարիսպներին այնքան մոտ գտնվող պալատը։ Իսկ վնասվածքները, կարելի է ենթադրել, խիստ էական էին։ Եթե պատերը համեմատաբար բիչ էին տուժել, ապա հաղարաշեն ծածկի այրվող գերանների տակ թաղված քարե սյուներից, նրանց բներից, խարիսխներից և խոյակներից հազիվ թե որևէ բան մնացած լիներ։ Կասկած չի մնում, որ վերակառուցող ճարտարապետները ստիպված էին վերափոխելու ամբողջ կրող սիստեմը, վերակառուցելու թե՛ սյունները և թե՛ ծածկն ամբողջությամբ։

Հավաքվեր ժողովուրդը մինչև ժամասացությունը սկսվելը։ Զվարթնոցի և Արուճի պալատների տեղաբաշխման փաստը լիովին հաստատում է այս։

34 Սեբեոս, էջ 110։

Թ. Թորամանյանը, հենվելով Սեբեոսի վրա, գրում է հետևյալը. «Տարակույս չկա, որ արաբական արշավանքի պատճառով Դվինը չափազանց ավերվելուց հետո նույնիսկ ավերված էր կաթողիկոսական բնակարանը։ Կաթողիկոսի անձնական բնակարան չունենալու և Դվինի միանգամայն ավերված և քանդված լինելը թերևս Ներսեսին առիթ եղավ իր շինարարությունը Վաղարշապատի մեջ սկսել, կաթողիկոսարանը ևս այնտեղ տեղափոխելով»[35]։ Սակայն Զվարթնոցի հսկայածավալ շինարարությունը չէր կարող արագ ավարտվել, իսկ Դվինը մնում էր կաթողիկոսի պաշտոնական նստավայր։ Հազիվ թե կարելի լինի կասկածել, որ այդ էին պահանջում նաև Դվինում նստած արաբները։ Այս պայմաններում տրամաբանական է, որ Զվարթնոցի շինարարությանը զուգահեռ Ներսեսը պետք է ձեռնարկեր նաև Դվինի պալատի վերակառուցումը։ Բացառված չէ, որ Ներսեսը շտապում էր ավարտել Դվինի պալատի վերակառուցումը այն հաշվով, որպեսզի նա պատրաստ լիներ 648 թ. հրավիրվելիք ժողովի համար։ Այս հինգ տարիները լիովին բավարար էին հրդեհից վնասված փայտածածկ պալատի վերականգնման համար, մինչդեռ Զվարթնոցի շինարարությունը հեռու էր ավարտից։ Մի քանի տարի անց, 652 թ. Դվինի այս պալատում է իջևանում Բյուզանդիայի Կոստանդ կայսրը։

Շատ ժամանակ չէր անցել այն պահից, երբ ավարտվեցին Սմբատ Բագրատունու նախատեսած կառույցները։ Հայտնի է, որ տաճարի շինարարությունը ավարտվեց Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ։ Անցել էր, այսպիսով, ընդամենը շուրջ երկու տասնամյակ և բացառված չպետք է համարել Դվինում աշխատած վարպետների մասնակցությունը Զվարթնոցի շինարարությանը։ Որ այդ այդպես էլ եղել է, ակնհայտորեն վկայում է ճարտարապետական ձևերի այն բացառիկ մոտիկությունը, որը տեսնում ենք Դվինի կաթողիկոսական պալատի և VII դարի 40—60-ական թթ. կառուցված այնպիսի հուշարձանների ձևերի միջև, ինչպիսիք են Զվարթնոցը ու Արուճը։

Դառնանք բուն ճարտարապետական ձևերին և առաջին հերթին կոնստրուկտիվ տեսակետից այնպիսի կարևոր տարրերին, ինչպիսիք են սյուները, դրանց առանձին ձևերը։ Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այն ժամանակ, երբ Երերուքի արտաքին սյունասրահի սյուները, անտիկ ավանդույթներին հետևելով, ունեին նեղացում դեպի վեր (էնտուզիս), նման բան չի նկատվում ո՛չ Դվինի, ո՛չ Զվարթնոցի, ո՛չ էլ Արուճի սյուներում։

Ոչ պակաս հետաքրքիր են պալատի սյուների այնպիսի տարրերը, ինչպիսիք են խարիսխները։

Վերջիններս բաղկացած են երեք հիմնական մասերից՝ ներքնասալից, գլանաձև մասից և վզիկից։ Դժվար չէ նկատել, թե որքան հեռու են խարիսխների այս ձևերը V դարով թվագրվող հուշարձանների համապատասխան ձևերից (Քասախ, Երերուք, Եղվարդ և այլն)։

V դարի խարիսխներին բնորոշ է ուժեղ տրամատավորված լինելը, երբ առկա են միմյանց զուգահեռ, համեմատաբար մանր, որոշ առումով անտիկ ձևերը հիշեցնող տրամատներ։ Այդ տեսնում ենք և բազիլիկաների[36] մույթե-

35 Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. առաջին, Երևան, 1942, էջ 261։

36 Ա. Սահինյան, Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը, Երևան, 1955, էջ 31։

րի խարիսխների, և՛ այնքան սակավաթիվ առանձին կանգնած սյուների խարիսխների ձևերում։ Այս տեսակետից առանձնակի բնորոշ են Երերուքի արտաքին սյունասրահի առանձին կանգնած սյուների խարիսխները[37], Ջրվեժի V դարի հուշասյան խարիսխը[38] և այլն։ Նման խարիսխներ քիչ չեն հայտնաբերվել Դվինի պեղումների ժամանակ[39] և սկզբունքորեն նույն մշակումն ունեն նաև Դվինի մեծ բազիլիկայի որմնասյուների խարիսխները[40]։

Երբ համեմատում ենք վերը նշվածների հետ Դվինի կաթողիկոսական պալատի խարիսխները, ապա դժվար չէ տեսնել, թե ինչքան մեծ, ինչքան սկզբունքային են տարբերությունները։ Եվ ընդհակառակը, երբ համադրում ենք նույն Դվինի կաթողիկոսարանի խարիսխները արդեն VII դարով թվագրվող հուշարձանների խարիսխների հետ, ապա չի կարելի չնկատել նրանց խիստ մոտիկությունը, իսկ առանձին դեպքերում էլ համարյա թե նույնությունը։ Հանգամանքն այս վաղուց է նկատված, և միանգամայն իրավացի է Վ. Հարությունյանը, երբ որոշակի նմանություն է տեսնում Դվինի և Զվարթնոցի էքսեդրաների սյուների խարիսխների միջև[41]։

Սակայն էլ ավելի մոտ են Դվինի խարիսխները Զվարթնոցի տաճարի առանձին կանգնած սյուների խարիսխներին, ընդ որում նրանք մոտենում են նաև բացարձակ չափերի տեսակետից[42]։ Ըստ էության համանման մշակում են ունեցել նաև Արուճի պալատի խարիսխները[43]։

Այս ամենն անշուշտ պատահական չէ։ Հանդիսանալով խիստ որոշակի կոնստրուկտիվ մի ձև, խարիսխները, ինչպես և խոյակները, պատկանում են առավել «զգայուն» ճարտարապետական ձևերին, որոնք որոշակի փոփոխություններ են կրում ոճական ամեն մի տեղաշարժի ժամանակ։ Նման մի ոճական տեղաշարժ, նոր փուլ էր VII դարը հայ ճարտարապետության V դարի նկատմամբ և հենց դրանով էլ պետք է բացատրել ճարտարապետական բազմաթիվ նոր լուծումների, նոր ձևերի և մոտիվների առկայությունը։ Ահա այս նոր ոճական ուղղության կնիքն էլ իրենց վրա են կրում Դվինի խարիսխները։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Դվինի պալատի սյուների խոյակները։ Նրանք, ըստ իրենց կոնստրուկտիվ էության, կրկնում են ժողովրդական բնակելի տների ծածկերում ընդհանրացած ենթահեծանային խոյակների ձևերը[44], սակայն արդեն հարմարեցված քարի պայմաններին։ Փայտե խոյակներում լավ հայտնի են սյան բնից մինչև վերնասալը արվող բոլորաձև փոխանցումների ձևերը, որոնք սովորաբար ձևավորվում էին մանր զարդաձևերով մշակված մոտիվներով։ Այս մոտեցումը հատկապես ցայտուն է դրսևորվում Սևանի խոյակներում։ Քարի պայմաններում նման աստիճանա-

37 Ս. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 245։

38 Н. М. Токарский, Джрвеж—Вохджаберд, Ереван, 1964. էջ 42։

39 Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 94։

40 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 95։

41 Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 62։

42 Ս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 37։

43 Վ. Հարությունյան, VII դարի աշխարհիկ ճարտարապետության մի նոր հուշարձան, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 8, էջ 62։

44 Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետությունը, Երևան, 1959, էջ 67։ Ն. Պապուխյան, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, էջ 126։

կան նեղացումը բացառված էր, որովհետև քարե խոյակն իր ամբողջ երկայնքով պետք է ունենար բավականին զգալի բարձրություն, մի բան, որը և դրսևորվեց փոխանցման միայն մեկ տարրի, մեկ վարդյակի կամ վարդյակ-

Արուճ. պալատի խոյակներից

ոլորազարդի առկայությամբ։ Պատահական չէ, որ համանման լուծումներ ունեն և՛ Դվինի, և՛ Արուճի խոյակները։

Հայկական ճարտարապետության մեջ V դարում ոլորազարդ խոյակներ հայտնի են եզակի հուշարձաններում միայն։ Վաղ հուշարձաններում ոլորազարդերի չափերը մեծ չեն և նրանք բնավ չեն կանխորոշում խոյակի տիպը։ Ահա այսպես են մշակված Երերուքի որմնասյուների խոյակները և նույն Երերուքում պահպանված հուշասյան մի խոյակ։

Միանգամայն այլ պատկեր ենք տեսնում VI—VII դդ.։ Այժմ ոլորազարդերը զգալի չափեր են ստանում (Ավան, Պտղնի) և խիստ զգալի տեղ գրավում խոյակի ամբողջ կոմպոզիցիայում։ Պահպանելով ոլորազարդ խոյակների հիմնական հատկանշական գծերը (հատկապես կողային բարձիկները), որոշ խոյակներում վարպետները անջատում են ոլորազարդերը, վերածում նրանց շրջանակների մեջ պարփակված վարդաձևերի (Դվին, հուշասյան խոյակ)։ Առանձին կանգնած սյուներում կոնստրուկտիվ նկատառումներից ելնելով ավելացվում է ուժեղ զամբյուղը։ Թերևս դրա առաջին օրինակներից են Զվարթնոցի էքսեդրայի խոյակները։ Նույն այս մոտիվը զգալի տարածում է գտնում հետագայում հուշասյուների խոյակներում, և որպես ցածրանիստ բարձիկ հանդես գալիս Դվինի հուշասյան խոյակի վրա, կրկնվում Արզնիի հուշասյան խոյակում և այլն։ Այս տեսակետից խիստ ուշագրավ է Դվինի հուշասյան խոյակը, որի շրջանաղարդ որոլաղարդերի միջանկյալ տարածությունը մշակված է Դվինի խոյակի նման, ճկուն, դեպի վեր բարձրացող և կող թեքվող արմավի

ձյուղերով[45]։ Եվ եթե այս երկու խոյակներին ավելացնենք Արուճի պալատի խոյակները, որտեղ առկա են և՛ ոլորազարդեր արմավի ճյուղերով, և՛ շրջանազարդեր, սակայն կողային մասերում ոլորազարդերին բնորոշ բարձիկ-



Արուճ. պալատի խոյակներից

ներով, ապա ակնհայտ կդառնա, որ Դվինի խոյակը ոչ այլ ինչ է, քան VII դարում հայկական ոլորազարդ խոյակների մշակման մի ուշագրավ աստիճան, ընդ որում այստեղ խիստ ակնհայտ է քարի մեջ մշակված ձևերի ազդեցությունը փայտե կոնստրուկցիաներին բնորոշ ենթահեծանային խոյակների ձևերի վրա, մի բան, որը ամենից առաջ դրսևորվել է խոյակների անմիջական շարունակությունը հանդիսացող բարձիկների առկայությամբ։ Իսկ ինչ վերաբերում է Դվինի խոյակի առանձին զարդաձևերին, ապա նրանք ևս դուրս չեն գալիս մեզ հետաքրքրող հուշարձանների շրջանակներից։ Ճիշտ է, արմավի տերևը ավելի լայն տարածում ուներ համեմատաբար վաղ շրջանում, սակայն նա ոչ պակաս հաջողությամբ կրկնվում է առանձին դեպքերում նաև VII դարում (Արուճի խոյակները, Դվինի հուշասյան խոյակը, կոթողներ), չի մոռացվում նաև ավելի ուշ շրջաններում (Սևանի խոյակները, Անիի, Հոռոմոսի, Բղենո Նորավանքի հուշարձանները և այլն)։ Առանձնակի կարևորություն է ստանում Դվինի և Արուճի խոյակների համադրությունը։ Չափերի համարյա թե նույնությունը, մշակման նույնատիպ սիստեմը (տարբեր են միայն վերնասալի և խոյողների միջև եղած տարածության մշակումները) ակնհայտորեն հաստատում են երկու խոյակների միևնույն ոճական հոսանքին պատկանելու հանգամանքը։ Ուշագրավ են նաև Դվինի խոյակի վերնասալի ձևերի զուգահեռները։ V դարում ընավ անհայտ այս մո-

45 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 146։

տիվը հիանալի կերպով դրսևորված է VII դարի մի շարք հուշարձաններում (Զրվեժ, Թարգմանչաց, Սիսավան)։

Այս ամենն անշուշտ պատահական չէր կարող լինել։ Ենթադրել, որ VII դարում կառուցված Զվարթնոցի և Արուճի ճարտարապետները ինչ-ինչ հնագիտական պրպտումներ են կատարել և ընդօրինակել իրենցից շուրջ երկու դար առաջ կառուցված հուշարձանի ձևերը[46] և նույնիսկ զարդամոտիվները, կլիներ խիստ անտրամաբանական։ Հայկական ճարտարապետության ամեն մի նոր ոճական ուղղություն (իսկ այդպիսին էր անշուշտ VII դարը V դարի նկատմամբ) թեև խարսխվում էր նախորդ դարերին բնորոշ հորինվածքների վրա, սակայն շատ շուտով մշակում էր իրեն յուրահատուկ ձևերը, ընդ որում հատկապես դեկորատիվ մոտիվների և զարդաքանդակների բնագավառում նույնությամբ չկրկնելով հնավանդ և ոչ մի ձև։

Ամբողջ հայկական ճարտարապետության պատմության մեջ եզակի օրինակներ կարելի է նշել միայն, երբ հաջորդ դարաշրջանի ճարտարապետները նույնությամբ պահպանելով կառուցվածքների չափերն անդամ, կրկնել են նախորդ շրջաններում մշակված հորինվածքները։ Նման բան հայտնի չէ VII դարում առհասարակ։ Կարելի է նշել X—XI դարերից մի քանի օրինակներ միայն (Գագկաշեն), ընդ որում այնտեղ ևս Տրդատ ճարտարապետը մի շարք էական փոփոխություններ մտցրեց համաչափությունների մեջ և չկրկնեց Զվարթնոցի և ոչ մի զարդամոտիվ։

Այսպիսով, Դվինի և Արուճի պալատների թե՛ հորինվածքների, թե՛ չափերի, թե՛ զարդաձևերի միջև եղած զարմանալի նմանությունը, Դվինի պալատի սյուների խարիսխների և Զվարթնոցի տաճարի խարիսխների համանման մշակում ունենալը, Դվինի տաճարից արևմուտք ընկած վայրում հայտնաբերված խարիսխների և Զվարթնոցի մեծ դահլիճին պատկանող խարիսխների մոտիկությունը տարակույս չեն թողնում, որ նշված բոլոր կառուցվածքներն էլ պատկանել են ոճական միևնույն ուղղությանը և նրանց թվագրությունների միջև տարբերությունը չի անցել մի քանի տասնամյակից, ընդ որում Դվինում և Զվարթնոցում անկասկած աշխատել են միևնույն վարպետները։ Ավելին, բացառված չպետք է համարել, որ առանձին վարպետներ, որոնք երիտասարդ հասակում աշխատել են Դվինում և Զվարթնոցում, Զվարթնոցի ավարտից (562 թ.) ընդամենը մեկ տասնամյակ հետո, նույն VII դարի 60—70-ական թթ. սահմանագծին կարող էին մասնակցել նաև Արուճի տաճարի և պալատի շինարարությանը։

Ամփոփենք. մատենագրական աղբյուրների և մեզ հետաքրքրող կառուցվածքների ճարտարապետական ձևերի համեմատական վերլուծության հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

Հայոց մայրաքաղաքի կենտրոնական թաղամասում այնքան նշանակալից տեղ գրավող պաշտամունքային կենտրոնի կազմավորումը տևել է շուրջ երեք դար, ընդ որում անսամբլի ճարտարապետական դոմինանտը՝ մեծ բազիլիկան և ապա նույն տեղում, նույն հիմնապատերի վրա կառուցված գմբեթավոր տաճարը, միշտ էլ պահպանել են իրենց որոշիչ նշանակությունը։

Կաթողիկոսանիստ այդ տաճարից ոչ հեռու պետք է լիներ նաև կաթողիկոսի պալատը, կառուցված ամենայն հավանականությամբ V դարում, Գյուտ

---

46 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., էջ 66։

կաթողիկոսի Դվին տեղափոխվելու առնչությամբ։ Դժբախտաբար մինչև այժմ այն չի հայտնաբերվել։ Սակայն կասկած չի կարող լինել, որ VI դարում ծավալված ռազմական գործողությունների պահին, երբ այրվում էր մեծ տաճարը, անվնաս չէր կարող մնալ նաև կաթողիկոսական պալատը։ Տաճարը մնաց լքված և կիսակործան մինչև VII դարի սկիզբը, երբ Սմբատ Բագրատունին հին բազիլիկայի հիմքերը օգտագործելով, կառուցեց մի նոր գմբեթավոր տաճար, իսկ նորընտիր կաթողիկոսի համար՝ մի նոր պալատ, տեղավորելով այն տաճարից հյուսիս տարածվող ազատ տարածության վրա։

640 թ. արաբների գրոհի ժամանակ Դվինի բազմաթիվ այլ շենքերի հետ միասին այրվեց նաև այս նորակառույց պալատը։ Շատ չանցած, 643—648 թթ. ընթացքում, այն վերականգնեց Ներսես Դ կաթողիկոսը, ընդ որում աշխատանքները ընթացան Զվարթնոցի շինարարության զուգահեռ։ 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ կործանվեց մեծ տաճարը։ Կաթողիկոսի պալատը մընաց անվնաս, և հետագայում խալիֆաթը այն վերածեց մզկիթի։ Կառուցվածքը կանգուն մնաց ևս երկու դար և ամենայն հավանականությամբ կործանվեց XIII դարում, մոնղոլական արշավանքների ժամանակ։

О ВРЕМЕНИ ПОСТРОЙКИ ДВОРЦА В ДВИНЕ

С. Х. МНАЦАКАНЯН

(Резюме)

В истории армянского зодчества дворец в Двине занимает особое место. Вопрос датировки неоднократно дискутировался: К. Г. Кафадарян датирует сооружение концом V в., В. М. Арутюнян считает возможным отодвинуть дату на VI в., а Н. М. Токарский датирует дворец началом VII в. В последнее время в специальной литературе памятник безоговорочно включается в ряд древнейших сооружений раннесредневековой Армении, твердо датируемый V в.

На основе анализа средневековых авторов и архитектурных форм сооружения в статье отмечается, что правы те исследователи, которые датируют сооружение VII в. Однако сведения средневековых авторов не дают достаточных оснований для ранней датировки сооружения. С другой стороны, анализ архитектурных форм дворца не оставляет сомнения, что они самым тесным образом связаны с формами, получившими развитие уже в середине VII в. Это приводит к выводу, что если дворец и основан князем Смбатом Багратуни в начале VII в., то он подвергся основательной перестройке в 40-х годах VII в. католикосом Нерсесом III.

Это подтверждает полная аналогия архитектурных форм дворца с соответствующими элементами как храма Звартноц, так и дворцовых сооружений в Звартноца, и Аруча — памятников 40-х — 60-х годов VII в.

Все это не оставляет сомнений, что в том виде, в котором памятник дошел до нас, он является сооружением не V, а VII века.